


Ամբաստանապետ
Խմբագրութիւն «Փիիհնիկ»
Աղեփանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ
Լր.՝
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25
—
ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է

ՓԻԻԿՆԻԿ

ԱՐՏԱԱՆՄԱՆ
Տր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8
—
ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ձեռագի ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՄԵԿ ԴՐՈՒՇ ՈՂՁ

Բ. ՏԱՐԻ

29 ՅՈՒՆԻՍ 1901

ԹԻԻ 4

ԻՆՉ ԿՈՒՉԷ

ԱՌԱՋԻՐ

Մեր նախընթաց առաջնորդութիւնը թե՛ ի՛նչեր կ'սպասէ ժողովուրդին Առաջնորդէն եւ այդ բոլոր սպասածներն իշագործելու առաջին և վերջին պայմանն նշանակեցինք համարաշուտութիւնը, որ կը գոյանայ ըսինք, միապետական շէնքի փլատակներուն վրայ կանգնելով սահմանադրական վարչութեան մը նոր ու հոյակապ կառուցը:

Արդար ըլլալու համար ընդունինք նախ դժուարութիւնները, որ ցյուսած են առաջնորդական իշխանութեան դէմ, և չը վաշտնինք բարձրաձայն գառապարտելու սարկներով տիրող վարչական ճեղք, որ միակ աղբիւր չարեացն է եզրիտահայ գաղութին ազգային կեանքին:

Յետագայձ ակնարկով մը կրնանք ընդգրկել խառնաշին կամ անիշխանական շրջանը, որ յաճորդեց Գեր. Իւ.

Թիւճեան Սրբազանին եզրիտասի առաջնորդութենէն հրաժարելուն: Այդ շրջանին եզրիտաս թափեցաւ հայ գաղութականութեան հեղեղը: Գահիրէի թէ Աղեփանդրիոյ բնիկները գրկաբաց ընդունեցին, պատասպարեցին, հոգացին ու պաշտպանեցին այդ տարագիրները. չուտով կազմուեցան նպաստամատոյց յանձնախումբեր, յատկապէս տարագրելոց համար. տիկնանց կրկին Խնամակալութիւն, կարծես թէ մրցումի ելան սրբելու համար արցունքները — որոնց մէջ դժբաղդաբար կեղծեր չ'էին պակսեր — Բնիկները, դարաւոր մուսուսուսով մ'ուճացած Մայր-Հայրենիքէն, հիասթափում մ'ունեցան. տեսնել պէտք էր, եկեղեցիներուն բակերը խունած այրիներու, սրբերու երամը, որ կը շրջապատէր հոն այցի եկած գթութեան կրկին Մայրերը, Գահիրէ ու Աղեփանդրիա. Տիկին Ս. Կարապետեան ու Տիկին Ն. Բարթող Պէյը, երկուքն ալ ճշմարիտ մօր մը բոլոր գորովին ու բոլոր կորովին մարմնացումը. կրկին պաշտպանութիւններ, որիչ ո՛չ նուազ անկեղծ, զգալուն ու ժիր բնկերութիւններու

յենած, կը բաշխէին հաց, գրամ, հագուստ, եւ անկողին. իւրաքանչիւր թշուառի բաւ մը կ'ուզէին, ոչ յոյսին չափ ոգևորիչ ու կեանքին չափ անուշ կը հնչէր այդ անգթօրէն տառապեալներու ականջին:

Այն ասէն ո՞վ էր ազգ. իշխանութեան դուրսը. ո՞վ գործել կուտայ այդ հրաշքները. ո՞վ կը կազմակերպէր այդ քան հիանալի ուժերը. ո՞վ էր շարժիչն, լարողն մեր ազգային մեքենային ու վարողն դալթային ճակատագրին...: Որչա՛փ որ կրնանք յիշել, Գահիտէ Տ. Մամբէ մը կար (որուն վրայ վերջէն աւելցաւ Յ. Աշոտ վարդապետ մը, Կ. Պոլսոյ թաղերուն մէջ քարոզիչ եղած, դէպքին վրայ, իր աւազախտին դարմանը գտնելու փափագով հոս եկած, նախ քարոզիչ ու քիչ յետոյ տեղապահ կարգուած, էջմիածին ուղևորած, Եպիսկոպոս վերադարձած, — բնականաբար չ'մոռնալով ծաղկեայ փիլոսօֆի մը թէ լանջախաչ մը բերելու Տ. Մամբրէին — 'ի վերջոյ եպիսկոպոսական խաչը լանջին, մատանին ալ մատին՝ Եգիպտոսէն ա՛լ հեռանալու հարկը զգացած այդ յարգէ մարդը). իսկ Աղեքսանդրիա, Վահրամ Վ. Աղարեան մը կար, նոյն ինքն հիմակուանը, Ս. Երուսաղեմի փոխանորդութեան ու Ս. Պօղոս եկեղեցւոյն Աւագ-Երեցութեան կրկնակի պաշտօններովը...: Ուրեմն բնենք թէ՛ մարդ չ'կար Եգիպտոս այդ շրջանին և թափո՛ւր էր առաջնորդական գահը. սակայն, ազգ. գործերը կ'ընթանային շոգեպինդ ու աւելի քան երբէք կանոնաւոր, ա՛յն աստիճան որ վայրկեան մ'իսկ մեր Պատ. Ժողովականաց ըզբղին մէջ չ'մտաւ Առաջնորդ մը բերելու ուրուականը:

Ու ինչո՞ւ ծածկենք ճշմարտութիւնը, չ'է՞ որ համերաշխութեան ոգին էր տիրապետողը մեր այն շրջանի ազգային վարչական մարմիններուն վրայ. չ'է՞ որ մեր բնական պաշտպանները, եկեղեցւոյ կալուածներուն պահապանները, ազգային հաստատութեանց վա-

տիսպոսաւորները, որոնք իրենց ազգեցութեամբն ու նախաձեռնութեամբը, մանաւանդ օտարազգիներուն մարդասիրական նպատներուն արգիւնքով ժամանակ մը պահեցին ամբողջ գաղթականութիւնը, մինչև որ անի յաջողեցաւ տեղաւորուիլ:

Արդ, հիմայ որ Եգիպտոս Առաջնորդ մ'ունի, օրինաւոր ու կարող բանաւոր չ'է՞ տեսնել ազգ. գործերն այն շրջանէն աւելի լուսագոյն ու գոհացուցիչ ընթացքի մէջ, քանի որ քիչ տարբերութեամբ միևնոյն ժողովականներն են որ ազգ. վարչութեան ղեկավարութիւնն ստանձնած են այսօր: Ու երբ ժողովուրդն իրաւունք կ'ստանայ մէկէ աւելի բարիքներ սպասելու իր Առաջնորդէն, բնական ու ո՛չ նուազ բանաւոր չ'է՞ հարցնել թէ՛ ի՞նչ կուզէ Առաջնորդը, պսակելու համար ժողովրդին փափագները:

Այս հարցն է ահա՛ զոր պիտի շանանք լուսաբանելու, հիմնուելով ժողովրդին արդար պահանջումներուն ու սպասումներուն վրայ:

Առաջնորդին առաջին ու վերջին փափագն է սահմանադրութեան ճշգրիտ գործադրութիւնն այս երկրին մէջ, ուր ինք կոչուած է առաջնորդութեան սահմանադրական ընտրութեան ուժով ու Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ Բ. Իռնէն առնուած պէրաքով:

Ստոյգ է թէ այս երկիրն ազատ է, եւ սահմանադրական վարչութեան յարմարագոյն դեպքն մը, ժողովուրդին իրաւունքներն ու շահերը պաշտպանող թերթերուն ու ա՛յն նպատակով կազմակերպուած գումարումներուն գէ՛մ կառավարական արգելք չ'կայ. խօսքի, գործի, մամուլի, կրօնի ու ընկերակցութեանց բացարձակ ազատութիւն կը վայելէ անի. արդ, ի՞նչ անունն տալու է այն անիմաստ ու վնասակար դրութեան, ամիրայական կամէութեանց ու միապետական ձեւին, որոնց ներքե կը հեծեն ժամանակէ մ'ի վեր առաջնորդ ու ժողովուրդ, երկու

տենալով իրաշու և զիբար հասկնալով, վերջ զնեւ այս աղետալի կացութեան, մէկ բառով, Առաջնորդը կուզէ որ ժողովուրդ ու ժողովական, առանց նկատումներու, առանց կանխակալ կարծիքի, նեցուկ ըլլան իրեն:

Լա՛ւ, իրաւունք ունիք, Սրբազան Հայր, ատի ձեր աշդաշ իրաւունքն է, բայց Գուք, գոնէ մի անգամ փորձ մը ըրի՞ք այդ վճռական քայլին համար. Գուք ու մենք միեւնոյն բանը կ'ուզենք. սակայն, երկուքիս ալ փափագին պատկումը՝ Ձեր բարի կամքէն ու ազգուհեղինակութենէն կախում ունի. առէ՛ք առաջին քայլն ու բոլոր ժողովուրդը, լիավատահ, անխախտ հաւատքով Ձեզի պիտի հետեւի: Մեր ջոջերն ազնիւ են ու դիւրաւ համազօրող. պարզեցէ՛ք կացութիւնն ու անոր վտանգը, պիտի շուտով համակերպին անոնք Ձեր յորդորներուն ու պատուէրներուն, որոնք փորձառութեան վրայ հիմնուած են ՚ի հարկէ. այնուհետեւ պիտի շուտով վերահաստատուի խանդարուած ներդաշնակութիւնը:


Սրբազան Առաջնորդնիս ալ կ'ուզէ մեր եկեղեցական կալուածներուն անազարտ պահպանումը, մանաւանդ Գահիրէի եկեղեցապատկան 1000 արմաւենիներուն համբարձման շարադուշակ օրէն ու տիրահնչակ լուրէն ՚ի վեր... սակայն լոկ պղատոնական կամքն ի՛նչ կ'նշանակէ առանց գործնական արդիւնքի: Կալուածոց Հոգաբարձութիւն մ'ստեղծելու է մասնաւորապէս. ահա՛ նորէն սահմանադրական վարչութեան մը պէ՛տքն է որ կը ցցուի հոս ալ:

Բնիկներուն ու եկերուն միջև համակրանքի հոսանք, այս ու այն տիտղոսաւորին Եւրոպայէն վերադարձի անտեղի առարկութեանց դէմ մաքառում, ազգային շահերը վտանգող խառնակութեանց բարձում, Գահիրէի ու Աղեքսանդրիոյ վարչական ժողովներուն փոխադարձ յարաբերութեանց բնութեան ճշգում, ընտրողական հեղինակութեան յարգանք, վարժարանաց բարեկարգում, զանազան բարենպատակ

ու մտաւորական յառաջդիմութեան ստատարող ընկերութեանց ստեղծում, գիւղերն ու Սուտանի խորերն ապրող աղքատիոց մասին մասնաւոր հոգածութիւն են, են. այս ամենն օրինաւոր ու արդար է սպասել, և Սրբազան Առաջնորդնիս ի՛ր իսկ հեղինակութիւնն ուշանալու է որպէս զի չ'ընդունի այս բոլոր պահանջումներուն անմիջական գոհացում տրուելու բացարձակ ու՛ անխուսափելի պէտքը:


Սակայն, վերագառնալով մեր վերեւ պարզուած ճշմարտութեան, Առաջնորդ ու ժողովուրդ նոյն փափագներով կ'այլին ու կը տանջուին. ա՛յս է բունաբարուած Սահմանադրութեան ազատագրութիւնն ու անխափան դորժագրութիւնն, առանց որոյ կացութիւնն հետզհետէ վատթարանալով ընդվզեցուցիչ հանգամանք կրնայ ստանալ:

Ժողովուրդին ուզածն է Սահմանագրութիւն. Առաջնորդնիս ի՛նչ կուզէ, կամ ի՛նչ պէտք է որ ուղէ. մէկ բան, կա՛մ ծովին ճամբան, եւ կա՛մ արդի կացութեան դարման:



ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ (1)

ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԻՒՐ



Ժողովուրդին համարին վերջին թիւին առաջնորդողին մէջ, մեր բարեկամը Լեոն Արսէնեան, բողոքելէ յետոյ, ազնիւ շեշտերով, Եւրոպայի քրէիքուր անտարբերութեան դէմ հայկա-

(1) Այս բաժնն մեզ պիտի հրատարակուին մեր յարգելի աշխատակից Պ. Ա. Ճ. համակրելի գրագետին — որ քաղաքիս անգլիական կարեւոր օրաթերթի մը խմբագրութեան անգամներէն է — անկողմնակալ ուսումնասիրութիւններն ազգային ու քաղաքական հարցերը բո՛ւսփով կարծիքներուն վրայ, որոնք պարբերաբար կ'երեւին հայ հանդէսներուն ու քերթերուն մէջ:

կան կոտորածներուն ժամանակ և նմա-
նապէս յիշեցնելէ յետոյ թէ շահն է
այդ գիրքին պատճառը, կը յանդի հե-
տեւեալ եզրակացութեան կամ իր բա-
ռովը ճշմարտութեան. «մտքի ու գրչի
հանդարտ պայքարներէ տարբեր մի-
ջոցներով միջամտութիւն առաջ բերե-
լու ջանքը աղետաւոր մտորում մ'է»:
Նոյն հանդէսին ազգայն քրոնիկի բաժ-
նին մէջ, Պ. Մ. Մ. Դրօշակի յաւել-
ուածին առթիւ խօսելով, կը յարէ թէ
համաձայն է նիւ Եօրքի աշխատակցին
տեսութեան եւ ցոյց տալու համար
հանրային կարծիք ըսուածին դիւրա-
թեք ունայնութիւնը, իբր ապացոյց կը
յիշէ Գրիւկէր նախագահին Փրանսային
կողմէն գտած խանդավառ ընդունելու-
թեան պաշտօնական զուտ պղատոնա-
կան հանդամանքը:

Այս երկու տեսութիւններն այն-
քան սխալ են որքան վտանգաւոր: Ու-
րեմն պէտք է հակառակն ապացուցա-
նել:

Արդարեւ, իբր ընդհանուր ս'ըզ-
բունք կատարելապէս ճիշդ է թէ ժո-
ղովրդի մը քաղաքական ազատագրու-
թեան անհրաժեշտ ու բաւարար պայ-
մանն է իր յատուկ ուժը: Ոչինչ աւելի
անհերքելի է քան այս ճշմարտութիւնը:
Պատմութիւնը կընծայէ մեզ օրինակներ
որոնք կը հատառան զայս: Միացեալ
Նահանգները, Իտալիա, Հապէշիտան
իրենց յատուկ ուժերով տիրացան ան-
կախութեան: Այս սկզբունքին համե-
մատ, հանրային կարծիքն եւ միջամը-
տութիւնը չեն թուիր անհրաժեշտ տար-
րեր ըլլալ: Բայց սխալ պիտի ըլլար
զայն ընդհանրացնել զօրաւոր թէ տկար
սարուկ ժողովուրդներու ամբողջու-
թեան:

Ան միմիայն կը պատշաճի այն ժո-
ղովուրդներուն համար, որոնք, ինչ-
պէս վերոյիշեալ օրինակները, թէ՛
թուով և թէ՛ դրամով, ի վիճակի են
պայքարելու, բանակ առ բանակ, այն
կառավարութեան գէ՛մ որոնց լուծին

այն ժողովուրդները որոնք չեն միա-
ցուցած այս պայմանները, կա՛մ շա-
րունակած են մնալ իրենց նախկին վի-
ճակին մէջ, ինչպէս Բոլոնիոյ ապտամ-
բութեան վիժումը, կա՛մ ազատագրուած
են արտօքին զօրաւորագոյն պետու-
թեան մ'օգնութեամբ, ինչպէս պալ-
քանեան փոքր ազգութեանց, Կրէտէի,
Քուպայր ազատագրութիւնը:

Ուրեմն պատմական փորձառու-
թեանն կը հետեւի սա սկզբունքը. փոքր
ազգի մը ազատագրութեան անհրա-
ժեշտ պայմաններն են, 1. ներսէն
կուռիլ անկանոն կերպով փոքր բայց
կազմակերպուած ուժերով, 2. Դրսէն
աշխատիլ դիւանագիտական միջոցնե-
րով միջամտութիւն առաջ բերելու,
եւ վերջապէս, իբր անհրաժեշտ պայ-
մաններէն մին այս միջամտութեան,
հանրային կարծիքին համակրութիւնը
շահիլ:

Այս սկզբունքը կը պատշաճի նոյն-
պէս հոյ ժողովրդին վերաբերմամբ:
Հետեւազար պարտի կազմել իբր խա-
րիսխը մեր գործունէութեան ընդհա-
նուր յատակագծին: Նպատակէս դուրս
է հոս քննել այն գործնական միջոց-
ները որոնք կապահովեն այս յատա-
կագծին որքան հնար կատարեալ գոր-
ծադրութիւնը:

Միայն պիտի շատանամ, մասնա-
ւորապէս միջամտութիւն առաջ բերե-
լու խնդրի մասին, դիտել տալ մինչև
հիմա այդ մասին կիրառուած ազի-
տաբեր միջոցներու լքանումը և ի փո-
խարէն, փորձուած և ուղիղ միջոցնե-
րու սրգեգրութիւնը Եւրոպայի մէջ
գտնուող այն Հայերուն կողմէն, որոնք
որոշ դրօշակի մը տակ, իրենց ժամա-
նակին մեկ մասը յատկացուցած են ազ-
գային խնդրին: Այսպէս է որ պէտք
է ուրախութեամբ ողջունել Բրօ-Ար-
մենիա հայասէր հանդիսին երևումը —
իբր ամենէն հզօր սատարը վառ պա-
հելու համար հայկական խնդրին պատ-
րաստելու համար Փրանսական հանրա-
յին կարծիքը ի նպաստ մեր դատին,

պայի մէջ պատկերացնելով Թուրքիոյ ներկայ դժոխային իրականութիւնը իր մանրամասնեալ թղթակցութեանց միջոցաւ:

Ա. Ճ.

ՓԱՐԻՉԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ

ՔՐԻՍՏ. ՄԻՈՒԹԻՒՆ

(Union Chrétienne de Jeunes Gens de Paris)

Այս բարենպատակ ընկերութիւնը կը բաղկանայ Ֆրանսայի լաւագոյն զաւակներէն, որոնց նպատակն է ֆիզիքական, մտաւորական ու բարոյական զարգացում տալ երիտասարդութեան: Կեդրոնն է Փարիզ, Թրէվիս փողոցը. Ընդհ. Քարտուղարն է Պ. Թէյիս, հեղ ու մարդասէր երիտասարդ Ֆրանսացին, որ ջարդերէն յետոյ դարձաւ հայասէր մը, Միութիւնն ունի մասնաւոր լսարան, ընթերցատուն, ուր պարզ ու դիւրուսոյց մեթոտով կ'աւանդուին ամեն կարեւոր լեզուներ ու գիտութիւններ, նաև երաժշտութիւն չնչին վճարումով: Երկրագնտիս քրիստոնեայ կեդրոններուն մէջ ունի մասնաճիւղեր, որոնք միւլենոյն ծրագրով և ամփոփոխ ուղղութեամբ կը դործեն:

Սակայն, Մեծ Մարդասպանին Մեծ Ոճիրը նոր ասպառէզ մը բացաւ Փարիզի երիտասարդաց Քրիստոնէական Միութեան գործունէութեան առջև. մարդասիրութիւնը պահ մը փոխուեցաւ հայասիրութեան: Տեսնել պէտք էր Թուրքիայի դժոխքէն մազադուր փախած Հայերուն տողանցութիւնը. մերկերու, անօթիներու տխրատեսիլ երամ մը, գունդ գունդ կը դիմէին հոն, Թրէվիս փողոցը, Միութեան կեդրոնատեղին, ուր Պ. Թէյիս, հայրենակցէ մ'աւելի խանդաղատանքով կ'ողջագուրէր զիրենք, թուրք բարբարոսութեան ու եւրոպական քաղաքականութեան այս զոհերը, կը պատսպարէր անմիջապէս ու կը մխիթարէր: Հայոց

յանձնարարութեան վրայ հաղարաւոր Հայերը զրկած է Անդլիա, Ա. Մերիկա, Պարսկաստան եւ այլուր. բաղմաթիւ հայ երիտասարդներ տեղաւորած է գործի: Չափազանցութիւն մ'ըրած չ'եմ ըլլար ըսելով թէ՛ Փարիզի մեր շնչերէն ունանք, այս հայասէր պատուական Ֆրանսացիէն գործնական ու օգտակար դասեր առին: Միութեան կեդրոնն եղաւ Ապաստանարան: Պ. Թէյիս, դիւցազնօրէն հասաւ ամենուն. ժամերով կը նստէր հայ բանւորներու, բեռնակիրներու, ցնցոտիներու մէջ փաթթուած դեղձուկներու մէջ, կը հետաքրքրուէր, Հայաստանի արիւնոտ տուամներուն նկարներէն յաճախ յուզուած, կը զայրանար: Ահա՛ ճշմարիտ մարդ մը, տիպար մարդասէր մը, որուն հանդէպ ամեն հայ սիրտ կը բարախէ երախտագիտութեան ազնիւ զգացումներով, և որուն անունը պէտք է անշնչելի մնայ մեր ժամանակակից պատմութեան արիւնոտ էջերուն մէջ ոսկեզօծ տառերով:

ԼԵՒՈՆ ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

ՔՐՈՆԻԿ

Ա. ԶԳԱՅԻՆ

— Գահիրէէն մեր ստացած նամակէն կը քաղենք.

«Առաջնորդնիս Գալստեան երկ. վարժարանին ամավերջի հարցաքննութեանց քանի մ'օր միայն ներկայ գլուխուելով, իջաւ Աղեքսանդրիա:

Կարգ մը շրջանակներու մէջ, Սրբազան Առաջնորդին բացակայութիւնը Գալստեան երկ. վարժարանին ամավերջի հարցաքննութեանց միջոցին՝ կը մեկնուի իբր դժգոհութեան ապացոյց մը նոյն վարժարանին ներկայ վիճակին մասին: Ուրիշ բառերով, Սրբազանը հարկ չէ՛ դատած սպասել քննութեանց

կազմելու համար անօրինութեան եւ ուսուցչական արդի մարմնին կարողութեանց վրայ:

Այս առթիւ կ'իմանանք թէ յառաջիկայ տարեշրջանին շատ կարևոր փոփոխութիւններ պիտի ներմուծուին վարժարանին մէջ, եւ եթէ պէտք է հաւատալ պտըտող զրոյցներուն, դիտաւորութիւն մ'իսկ կայ ծաղկոցի վերածելու զայն, բարձրագոյն կարգի աշակերտները Փռնչներու վարժարանները գնելով Ազգ. վարժարանին պիւտճէովը:

Հայկական Սրճարանը փակուեցաւ, տեղը վարձեց Սթէյնը, իսկ Բարեգործ. ընկերութիւնը դեռ աեղ մը չէ՛ դտած ու այս հաշուով գտնալիք ալ չ'ունի: Սրճարանին փակումը գուժելէ յետոյ փութամ աւետել հանդիսաւոր բացումը նոր լսարան-ընթերցատան, որուն համար յարատե յաշողութիւն մաղթե՛նք:

Գալստեան վարժարանին բարձր կարգի աշակերտաց կրթութիւնը Փռնչներուն յանձնուելու դիտաւորութիւն մը կայ, կը գրէ մեր պատահական թղթակիցը. բայց մենք վերապահութեամբ արձագանք կ'ըլլանք այդ լուրին և սպասելով որ պաշտօապէս հաստատուի, կը խոստանանք մեր յաջորդութիւններէն մէկուն մէջ անդրադառնալ այս կարևոր խնդրին վրայ:

— Կը լուրի թէ՛ տեղւոյս Թաղ. Խորհուրդը միտք ունի այս տարի հրապարակային չ'ընել Պօղոսեան երկ. վարժարանաց հարցաքննութիւնները, ինչ որ կ'ապացուցանէ թէ գերազանցօրէն հրապարակային պիտի ըլլայ անի:

Արդարեւ, ո՛չ մէկ բանաւոր պատճառ կարելի է երևակայել այս որոշման, եթէ ո՛չ քննութեանց արդիւնքի մասին վախը: Հասարակութիւնն այդ կերպով աւելի գէշ գաղափար մը պիտի կազմէ — եթէ արդէն իսկ կազմած չ'է — վարժարանաց վիճակին վրայ, քան եթէ Թաղ. Խորհուրդը խելացի որոշումը տար Գննիչ Յանձնախումբ մը կազմելու

նաբար, հեղինակութիւնը պիտի ունենային գաղափար մը տալու արդիւնքին վրայ: Ամեն պարագայի մէջ, չ'ենք մտածեր թէ Սրբազան Առաջնորդը զլանայ իր ներկայութիւնը, որ անհրաժեշտ է, և կը յուսանք թէ վերջնապէս պիտի որոշէ աղբու և վճռական դիրք մը բռնել հանդէպ աղբ. իշխանութեան, աշմատական բարեփոխումներ ներմուծելու համար վարժարաններուն մէջ, որոնք, խիստ ողբալի կացութեան մէջ կը գտնուին, և որոնք, այսպիսի ազատ երկրի մը մէջ, պիտի կրնային անհունապէս իրենց օգտակար բաժինն ունենալ աղբային մատաղ սերունդին դաստիարակութեան ա՛յնքան կենսական ու հիմնական գործին մէջ:

— Արուեստահր ընկերութեան Պատանդամները կը հրաւիրուին Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուի Յուլիս 4ին, հինգշաբթի իրիկունը ժամը 9ին միջոցները, Հայկական Մեծ Սրճարանի մասնաւոր սրահին մէջ: Ընդհ. ժողովն առ ժամեայ Տնօրէն ժողովէն հաշիւ ու տեղեկագիր ստանալէ յետոյ պիտի ձեռնարկէ Տնօրէն ժողովի մ'ընտրութեան, ու պիտի զբաղի նաև ընկերութեան վերաբերեալ արիշ կարևոր խնդրներով:

Բարոյախօս հոգաբարձու մը. — Շատ խօսուեցաւ գայթակղալից միջադէպի մ'առթիւ, որ վերջերս տեղի ունեցած է Գահիրէի Գալստեան վարժարանին ամսվերջի հարցաքննութեանց ժամանակ, ծնողքի մը և նորընտիր հոգաբարձուներէն մէկուն միջև:

Այս հոգաբարձուն — դեռ երիտասարդ, այս նոր պաշտօնին իր վրայ ցայտած պատիւէն գինովալու չափ, սրամտութեան աստիճանաչափը տալու համար սա չ'ըլլալիք հարցումը կ'ուզէ, բարոյագիտութեան քննութեան պահուն, աշակերտուհիներէն մէկուն:

— Գծեցէ՛ք, Օրիորդ, անբարոյականութեան սահմանները !!!

Անշուշտ, այս չափազանց բարոյախօս հոգաբարձուն բարձրագոյն նիշը պիտի ստացայն աշակերտուհիին, եթէ պա-

տասխանէր թէ՛ ճիշդ այդ հարցման մէջ է անբարոյականութիւնը: Սակայն դու հացուցիչ պատասխան մը չը տալուն համար զրօ առած է:

— Ուշախոսութեամբ կ'իմանանք թէ վսեմ. Պօղոս բաշա Նուսրաշ եւ իրեն հետ Պատ. Թաղ. Խորհուրդը գեղեցիկ գաղափարն ունեցած են Ս. Պօղոս Եկեղեցւոյ դրսի հողերուն վրայ կառուցանելու բազմաշարի շէնքեր, որոնք անտարակոյս պիտի ծառայեն ազգ. եկամուտները բաղմատակելու: Ժողովուրդը սրտագին շնորհաւորութեամբ կ'ողջունէ այս խելացի ձեռնարկը: Սակայն ներելի՞ է արդեօք գիտել տալ թէ՛ մեր Պատ. Թաղ. Խորհուրդը լաւագոյն բանն ըրած պիտի ըլլար, եթէ այսպիսի լուրջ դարձ մը հապճեպով ձեռնարկելէ առաջ՝ շինութեանց յատկադժին և ուշիչ պայմաններուն նկատմամբ խղճա կիտ ուսումնասիրութիւն մը ընելով՝ մրցումի հրաւիրէր բոլոր երեւելի հայ ու օտաշ երկրաչափներն ու ճարտարապետները, լաւ մը ծեծէր եւ յետոյ տալ իր վերջնական որոշումը:

ՀՐԱԽԷՐ

Խումբ մը երիտասարդներու նախաձեռնութեամբ՝ քաղաքիս կտէն Թատրոնին մէջ յառաջիկայ Կիրակի 30 Յունիս կէս օրէն վերջ ժամը 3 1/2 ին բանախօսութիւն պիտի կատարուի ուր հրաւիրուած են խօսելու Օր. Մանր Պէյլէրեան և Պ. Զարեհ Գոչեան:

ՅԱՅՏԱԳԻՐ

Հայ կիներ արդի ընկերութեան մէջ Օր. Մ. Պէյլէրեան.

Հայը ներկային մէջ ու ապագային Պ. Զ. Գոչեան.

Այս առթիւ կը հրաւիրուի տեղիս երկուստ հայ գաղթականութիւնը:

Մուտքի համար վճարում չ'կայ:

Կարգադիր Մանախումբ

ԱՐՏԱՔԻՆ

Տուգանքները. — Թուրք կառավարութիւնը վերջապէս համակերպեցաւ վճարելու Հայաստանի շարգերու համար պահանջուած տուգանքները, եւ այս, գեսպաններուն ստէպ ու ազգու միջամտութեանց վրայ:

Հելլէն հպատակներուն պահանջած տուգանքները, որոնք կը մնան դեռ, զատ պիտի վճարուին: Թուրքիան պիտի վճարէ 48000 օս.ֆ. ոսկի ֆրանսական հպատակներուն կամ պաշտպանեալներուն և 65000 ոսկի ալ գերմաններուն:

Ռուսիոյ մէջ. — Նոր խռովութիւններ սեղի ունեցան արևուս 21ին Ս. Բէթերզպուրկ. ոստիկանութիւնը միջամտել ստիպուեցաւ. բազմաթիւ ձերբակալումներ եղան. քաղաքական դիրքի տէր և ազնուական շատ մ'անձնաւորութիւններ բանտերը նետեցին. ուրիշներ ալ հարկադրուեցան երկիրը թողլու եւ արտորուեցան 3 տարուան համար:

Միևնուի պաշտք. — Գանտիոյ մէջ անդլիական հնախուզական սոսաքելութեան մը Տնօրէնը Տօքթ. Էվանս, կը ծանուցանէ թէ ստուգիւ դտած է Մինոսի պալատին աւերակները:

Մակեդոնիոյ մէջ. — Քիլիսիի Թուրք իշխանութիւնները ձերբակալած են ամսոյս 22ին շատ մը Պուլկարներ իբր յեղափոխական դօմիթներու կասկածեալ մասնակիցներ: Երկար հարցաքննութենէ մը վերջ, ասոնք արտաքսուեցան երկրէն առանց որ և է դատավարութեան: Տէրութեանց Կ. Պուլսոյ գեսպաններն սկզբամբ բողոքեցին Բ. Դրան դատելու այս եղանակին ապօրինութեան գէմ:

Պուլկարներուն ներումը. — Սելանիկի դատարանէն դատապարտուած շատ մը Պուլկարներու Սուլթանէն ներումած ըլլալու լուրը՝ մեծ յուզում առաջ բերաւ այդ քաղքի հելլէն ու օսմանեան շրջանակներուն մէջ:

Հայրիցի հանրձեռն իշխանուհին, կին

պատու նուրի պէյի, մօտերս բանախօսութիւն մը պիտի ընէ Աթէնքի Պառնասոս լսարանին մէջ նիւթ ունենալով Միւսիլիան կենոց պայտեակն Արեւելքի մէջ եւ Հարեմի կեանքը: Իշխանուհին Թունուզի պէն Այաա Մահմուտ բաշայի ազլիկն է, խիստ գեղանի, մտացի և ուսեալ, սլացիկ ու նազելագեղ հասակ, գրեթէ եւրոպական ստարազով հագուած, մշտաժպիտ ու ընկալուչ: Պիտի բանախօսէ թուրքերէն, որ պիտի թարգմանուի նոյն ժամուն: Աթէնքի ընակիչներն անձկոտ հետաքրքրութեամբ կ'սպասեն այս նորասեռ գրական ձգողութեան: Հանրմի, մանաւանդ միւսլիման իշխանուհի բանախօսութիւնը պիտի դառնայ աւելի ազատութեան շուրջը, զոր բարձր գառակարգի ու Երլարզի Հարեմին տիկինները պարտէին վայելել:

Մեծ Գոբս. — Ալիքսանդր Միքայէլովիչ, Չարին քենեկալը, Յուլիոսին Պուլկարիա պիտի երթայ սև ծովի ռուսական նաւատորմիցով, որուն հրամանատարութիւնն ինք պիտի ունենայ: Այս լուրն ահագին սրտայուզութիւն ասթեց Պուլկարիա, ուր մեծ պատրաստութիւններ կ'ընեն, Մեծ Գոբսին փայլուն ընդունելութիւն մը ապահովելու համար:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Խորհրդաւոր հարիւրախոս. — Էճիքչըն կաշեք կը ծանուցանէ թէ Հայ մը, Լեւոն Ֆէհմի, որ երիտասարդ թուրք կուսակցութեան կը պատկանէր և ոչ ատեն մը Գահիրէ Միշանի Ասայէք թուրքերէն լրագիրը հրատարակեց, անցեալ շաբաթ օր Բաս-էլ-Թինի պալատը կանչուած է և անկից 'ի վեր գեռ երկցած չ'է: Իր բարեկամները, որոնց նախապէս իր ո'ւր երթալն խնայուցած էր, մտատանջութեան մէջ ինկած, իր մասին, կ'երթան պալատ. բայց քարտուղարը կը պատասխանէ թէ տեղեկութիւն չ'ունի: Լորտ Գրոմբրի կը հեռագրուի, բայց գեռ պատասխան չըկայ: Վերջին պահուն կը հաստատուի

թէ Լորտ Գրոմբր այս գործին համար Աղեքսանդրիա իջած է:

Մանրամասնութիւններն առաջիկայ թիւով:

Ա Ջ Դ Ե Ի

Գ Ր Ի Գ Ո Ր Ն Ա Ջ Ա Ր Է Թ Ե Ա Ն

ՓՈՐԱԳՐԻՉ — ՏՊԱԳՐԻՉ

Կը պատրաստէ փութով ու ճաշակով ա՛նն տեսակ կնիքներ, դառչուի ու պղինձի վրայ. բլախ, հստանիկոյ, արծաթ ու ոսկի ձօնօկրա՛ններ, հաշունգուցակ, անդիդ, այցեխարս, հաւցեխարս, ևն: Սակարկութեան համար դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

Գ Է Ո Ր Գ Թ Օ Գ Ա Թ Ե Ա Ն

ՎԱՆԵՂԻՆԱՅ ՅԱՊԱՐԻՉ (Tapisserie)

Բաղաքիս երեւելի հայ տուներուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ դոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, ևն:


Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

Հ Ս Մ Բ Ա Ր Չ Ո Ւ Մ Մ Ո Ւ Ղ Ա Ն Ա Ն

ՄԵԾ ՎԱՃԱԳԱՏՈՒՆ ԿՕՇԿԻ, ԳԱՆԹՕ

Արանց, կանանց ու մանկանց ամեն տեսակ կօշիկներ չափի վրայ կը պատրաստէ, կը վաճառէ. ապրանքները մաքուր, տախտն ու ձևաոչ. կը մրցի բոլոր օտաւ փաճառատանց հետ, գիներուն աժանութեան կողմէն:



Փիւնիկը կը ծախուի.

— Աղեխանդրիա. Շէրիֆ Բաշա փուլաց, Անկլօ Էթիքսիէն Դրամատան քով, Տիար Բարսեղ Թէլլալեանի խանութը:

— Գահիրէ. Ապրիւլ Աղիւլ փողոց, Տիար Կարապետ Երզնկացեանի խանութը: